А. А. МАРТИРОСЯН, «Аргиштихинили» (Археологические памятники Армении, № 8, Урартские памятники, выпуск I), издательство АН Арм. ССР, Ереван, 1974, 176 стр.

1962 թ. ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը պեղումներ սկսեց ՀՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արմավիր գյուղում։ Այժմ սեղանի վրա է Նոր Արմավիրի հնագիտական արշավախմբի պետ Հ. Մարտիրոսյանի 1962—1970 թթ. աշխատանքների արդյունքները ամփոփող հաշվետվություն-ուսումնասիրությունը։

Արդի Նոր Արմավիր, Նալբանդյան, Արտագերս, Արմավիր, Հայկավան, Բամբակաշատ և Ջրաշեն գյուղերի վրա տարածվող Արգիշտիխինիլի՝ ուրարտական մ. թ. ա. VIII—VII դդ. քաղաքի, պեղումները ուշագրավ երևույթ հանդիսանալով Հայաստանի հնագիտության համար, նշանավորում են նաև, ի թիվս այլ աշխատանքների, ուրարտական հուշարձանների հնագիտական ուսումնասիրման նոր փուլը։

Արգիշտիխինիլի հնագիտական ուսումնասիրման համառոտ ակնարկը, քաղաքի տարածքում նախաուրարտական բնակավայրերի ու մշակույթների հետքերի նկարագրությունը, Արարատյան դաշտի նվաճման պատմությունը ուրարտացիների կողմից կազմում են աշխատության առաջին գլխի բովանդակությունը։

Երկրորդ գլուխը նվիրված է քաղաքի պատմությանն ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների։ Գրավոր աղբյուրների տվյալների նոր ընդհանրացումը անհրաժեշտ է ոչ միայն հնագիտական նյութը ճիշտ հասկանալու համար, այլ նաև այն պատճառով, որ այդ աղբյուրների թիվը ավելացել է հենց պեղումների ընթացքում։ Նոր արձանագրությունների գյուտը, մեկը Արգիշտի I-ի, մյուսը՝ Սարդուրի II-ի, որն արդեն բավական է ընդգծելու պեղումների արդյունավետությունը, անհրաժեշտ էր դարձնում նման արժեքավորումը։

Աշխատության երրորդ գլուխը վերնագրված է «Տեղագրությունը և քաղաքաշինական կառուցվածքը»։ Աշխարհագրական և տնտեսական միջավայրը, ռազմաստրատեգիական դիրքը՝ կապված ռելիեֆի առանձնահատկությունների հետ, և մի շարք այլ տեղագրական գործոններ, որոնք հասկանալի են դարձնում քաղաքի հիմնադրման նպատակահարմարությունը, քննված են ամենայն մանրամասնությամբ։ Սեպագիր արձանագրությունների տվյալները, տեղանքի առանձնահատկություններն ու ժամանակակից ջրանցքների ուղիները հեղինակին թույլ են տալիս վերականգնելու նաև հին ջրանցքների մոտավոր սխեման։

Տեղագրական հանույթը ու պեղումների արդյունքները տալիս են հուշարձանի քաղաքաշինական տպավորիչ պատկերը։ Հեղինակը ցույց է տալիս, որ քաղաքը իր հստակորեն տարորոշվող երկու ներքին և արտաքին քաղաքամասերով, երկու ամրոցներով, բազմաթիվ զուգահեռներ ունի հին արևելյան քաղաքաշինության, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի հնագույն կառուցողական արվեստի մեջ։

Չորրորդ գլխում քննության են առնված քաղաքի շերտագրության ու ժամանակագրության հարցերը։ Աշխատությունից երևում է, որ նախաուրարտական շերտի վրա բարձրանում է ուրարտական քաղաքը, որն ամրոցում իր հերթին ծածկված է միջնադարյան՝ IX—XIII դդ. բնակավայրի մնացորդների թանձր շերտով։

Ուրարտական քաղաքը նույնպես ենթարկված է շերտագրական տարբերակման՝ ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական։ Հուշարձանի ճարտարապետական հատակագծային վերլուծությունը, ստացված Կ. Ղաֆադարյանի մասնակցությամբ[1], զուգակցված հնագիտական ու արձանագրական նյութերից ստացված հարուստ ինֆորմացիայի հետ, նման աշխատանքի հուսալի հիմքն են կազմում։

Բոլոր այս տվյալների համադրությունից բխում է քաղաքի զարգացման պատկերը։ Հատկապես ուսանելի է ամրոցից դեպի արևմուտք ձգվող տեղամասի պատկերը, որը բացվել է

[1] К. К. Кафадарян, Архитектура города Аргиштихинили (автореферат кандидатской диссертации), Ереван, 1975.

պեղումների ընթացքում։ Այստեղ ստացված շերտագրական տվյալներն անփոխարինելի աղբյուր են քաղաքի ընդարձակման պատմության համար։ Բանն այն է, որ Հ. Մարտիրոսյանին հաջողվել է պարզել, թե այստեղ է գտնվել Արգիշտի I-ի օրոք հիմնադրված քաղաքի հին, նախնական գերեզմանոցը։ Քաղաքի ընդարձակման կապակցությամբ, հավանաբար Սարդուրի II-ի օրոք, այս տարածքը կառուցապատվել է։ Հնագետները հայտնաբերել են նոր թաղամասի տները ու նրանց հիմքերի տակ գտնվող թաղումները, բացելով հին քաղաքի պատմության նոր էջեր։

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է արևմտյան ամրոցին։ Պեղումների ընթացքում բացված պատերը խիստ ուսանելի է ու թույլ է տալիս ներթափանցելու ուրարտական ամրոցաշինության ու ճարտարապետության սկզբունքների մեջ։ Ամրոցը կառուցված է ս. Դավիթ բլրի վրա, որի բարձրությունը 52 մ է և գրավում է մոտ 2 հա տարածություն։ Այն շրջապատված է մի քանի շարք պարիսպներով և կառուցապատված է առաջնակարգ շենքերով։ Ինչպես պարիսպները, այնպես էլ շենքերը կառուցված են տարբեր մակարդակների վրա, այսինքն՝ համապատասխանեցված են բլրի մակերևույթի ելևէջներին։ Հատկապես մեծ վարպետությամբ են օգտագործված բլրի լանջերը՝ լրացուցիչ տարածություն ձեռք բերելու նպատակով։ Զարմանալի չէ հետևապես, որ Արգիշտիխինիլի արևմտյան ամրոցի ընդհանուր տեսքը ուրարտական այլ հուշարձանների նմանությամբ բնութագրվել է ծավալների աստիճանաձև դասավորությամբ, որն ուրվագծին հաղորդել է առանձին հմայք։

Ամրոցն ունեցել է երեք մուտք։ Նրանցից մեկը, ինչպես պարզվել է պեղումների ընթացքում, ունեցել է երկու՝ իրար նկատմամբ ուղիղ անկյան տակ դրված դարպասներ, որոնց միջև գտնվում էր փակուղային անծածկ սենյակը։ Արտաքին դարպասից ներս խուժած թշնամին ոչնչացման էր ենթակա այստեղ՝ վերևից հարվածող պաշտպանների կողմից։ Աշխատությունում համոզիչ կերպով վեր է հանված ամրոցի հիմնական մասերի ժամանակագրական կերպարը, նրա կառուցապատման ընթացքը։ Արգիշտի I-ի ամրոցն ունեցել է մեկ շարք պարիսպ, պալատական համալիր, բակ՝ շուրջը բազմաթիվ կառույցներով և տաճարային շենք։ Սարդուրի II-ի օրոք հարավից և հյուսիսից պարիսպների նոր շարքեր են կառուցվել, իսկ նրանց ու հին պարիսպների միջև բազմաթիվ (մեծ մասամբ տնտեսական) շենքեր են կանգնեցվել։

Պալատական շենքի հստակորեն որոշվող ժամանակագրական կերպարը, նրանում գտնված այան խարսխի վրա դրոշմված Արգիշտի I-ի արձանագրությունը այն թվագրում է մ. թ. ա. VIII դ. առաջին կեսի սահմաններում։ Կուլտուր-պատմական կարևոր աղերսներ բացահայտող հատակագծային սկզբունքների մշակվածության աստիճանը թույլ է տալիս այն համարել ուրարտական ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը։ Թեպետ շենքը Սարդուրի II-ի ժամանակ և ապա ամրոցի անկման նախօրյակին որոշ փոփոխություններ է ապրել, նրա հիմնական մասը մնացել է անփոփոխ։ Այն բաղկացած է երկարավուն սյունազարդ դահլիճից (2 շարք, 10-ական սյուն), որի մի կողմում բնակելի սենյակներն են դասավորված, իսկ մյուսում՝ ընդունասրահները, ինչպես նաև տնտեսական նշանակություն ունեցող մասը։ Խիստ ուշագրավ է, ցույց է տալիս հեղինակը, որ համալիրը իր զուգահեռներն ունի Ուրմիա լճի հարավում տեղադրված Մանա երկրի ամրոցներից մեկում, ժամանակակից Հասանլուում։

Այդ ամրոցի IV շերտում, որը թվագրվում է մ. թ. ա. X—IX դդ., բացվել են մի շարք շենքեր, որոնք ունեն Արգիշտիխինիլիի համալիրին նման հատակագծային հորինվածք։ Այս աղերսը, որը բացահայտում է դեպի հարավային մշակութային կենտրոնները կողմնորոշված ուրարտական ճարտարապետության ակունքները, հնարավորություն է տալիս Հասանլուի տվյալների հիման վրա մոդելավորելու վաղուրարտական, հատկապես մ. թ. ա. IX դ. մեզ մինչև օրս քիչ հայտնի ճարտարապետության կերպարը։

Արգիշտիխինիլիի պալատական համալիրը կարևոր է ոչ միայն հին արևելյան հուշարձանների հետ իր ունեցած կապերի տեսակետից, այլ նաև այն դերի բերումով, որը նա խաղացել է հայ ճարտարապետության ձևավորման գործում։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է ճարտարապետ Կ. Ղաֆադարյանի հիմնավորած հատակագծային ու ֆունկցիոնալ նմանությունը Արուճի Մամիկոնյանների ու Դվինի կաթողիկոսական պալատների հետ (մ. թ. VII դ.)։

Պեղումների ընթացքում ամրոցում բացահայտվել է նաև շինարարական մի վերջին շրջան, որն ամենայն հավանականությամբ կապվում է ամրոցի անկման նախօրէի հետ։ Խոսքը անշուք կացարանների մասին է, խրճիթների՝ խցկված պարիսպների արանքում։ Այս, իր բնույթով համեստ, բայց նշանակությամբ առաջնակարգ նյութը Հ. Մարտիրոսյանի ձեռքում դարձել է հուշարձանի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության շոշափելի աղբյուր։

Աշխատության վեցերորդ գլուխը նվիրված է բուն քաղաքի, նրա բնակելի թաղամասերի պեղումների արդյունքներին։ Սրանց ավերակները ձգվում են մոտ 2,5 կմ և զբաղեցնում են

երեք բլուրներ ու նրանց միջև ընկած թամբաձև իջվածքները։ Այսպես կոչված ներքին քաղաքը կազմող թաղամասերը հնում պարսպապատված են եղել։

Պեղումների ընթացքում բացվել են առանձին թաղամասեր կազմող 50 առանձնատներ, որոնցից մոտ 10-ը՝ լավ ընթերցվող հատակագծով։ 400—600 մ2 մակերես ունեցող տները արտաքինից կազմում են քառանկյունի կամ համարյա քառակուսի շենքեր՝ խուլ պատերով կամ կոնտրֆորսներով հարդարված։ Հատակագծման առանձնահատկությունները և տներում գտնված հնագիտական նյութը Հ. Մարտիրոսյանին թույլ է տալիս որոշելու այս բազմասենյականոց բնակարանների ամեն մի սենյակի դերն ու նշանակությունը։ Հստակորեն տարբերվում է կենտրոնական սենյակը։ Այն ունեցել է տանիքը պահող սյուներ, նստարաններ և օջախ։ Նրա շուրջը դասավորված են եղել բնակելի սենյակները, տնտեսական նշանակություն ունեցող բաժանմունքները (կարասներով սենյակներ, գոմ, խոհանոց և այլն)։

Շքեղ տները, անկասկած, պատկանել են քաղաքային բնակչության վերնախավի ներկայացուցիչներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, իշխանավորներին։

Ճիշտ են նկատված տներում կատարված վերափոխությունները և նրանց ժամանակագրական փուլերը, որոնք ունեն մեծ կարևորություն հուշարձանի սոցիալ-տնտեսական էությունը հասկանալու տեսակետից։ Այդ վերափոխությունների մի մասը կապված է քաղաքի աճի հետ, իսկ մյուս մասն արտացոլում է քաղաքական անկման վիճակը։

Քաղաքի տնտեսության հարցերը քննվում են աշխատության յոթերորդ գլխում։

Հնագիտական նյութերը և արձանագրությունների տվյալները թույլ են տալիս ուրվագծելու քաղաքի տնտեսական կյանքը, պարզելու նրա բազմաճյուղ բնույթը։ Արգիշտիխինիլին հանդես է գալիս նախ և առաջ որպես գյուղատնտեսության կենտրոն։ Հացահատիկների մշակումը, այգեգործությունը և ուրարտական գյուղատնտեսության մյուս առաջատար ճյուղերը Արգիշտիխինիլիում հասել են աննախընթաց վերելքի։ Ինչքան էլ պայմանական լինեն հեղինակի փորձերը՝ միջնաբերդում ամբարվող ցորենի կամ գինու քանակի հիման վրա հաշվելու ցանքատարածությունների ծավալը, նրանք որոշակի պատկերացում են տալիս պետական-թագավորական տնտեսությունների որոշիչ դերի մասին, ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ առանձին քաղաքների կյանքում։ Ոսկրաբանական նյութի ուսումնասիրումը, որը կատարել է Ս. Մեժլումյանը, և այլ կարգի տվյալներ, թույլ են տալիս խոսել անասնապահության ու անասունների կազմի մասին։ Այս տեսակետից ուշադրության արժանի են բժշկության մեջ օգտագործված դանազան կենդանիների ու թռչունների մնացորդները։

Աշխատության մեջ հետաքրքիր տվյալներ կան ուրարտական քաղաքի կյանքը բնորոշող արհեստների (բրուտագործություն, մետաղամշակություն, քարի և փայտի մշակում) մասին։

Ուշադրության արժանի են կավանոթների վրա դրոշմված կամ փորագրված նկարները (մարտակառք, առյուծներ, այծեր ու կենաց ծառերը), ինչպես նաև արհեստավորների բազմաթիվ նշաններ։

Աշխատության վերջին գլխում քննության են առնված քաղաքի անկման հնագիտական հետքերը։ Նրանք երևում են ամենուրեք (հատկապես ամրոցում) և կապված են գլխավորապես վերջինիս հրկիզման հետ։ Հրդեհի հետքերը, ավերածությունները, սպանությունները ավելորդ անգամ վկայում են քաղաքի բռնի գրավման մասին։ Թեպետ արևելյան ամրոցը (Արմավիրը) և նրա որոշ շենքեր ևս հրկիզվել են, այնտեղ, ինչպես հայտնի է, կյանքը շարունակվել է։ Մ. թ. ա. IV դ. Արմավիրը դառնում է Երվանդունիների հայկական պետության մայրաքաղաք։

Արդեն վաղուց ապացուցված է, որ ուրարտական հուշարձանների նշանակությունը չի սահմանափակվում Ուրարտուի պատմության ու մշակույթի շրջանակներով։ Վերոհիշյալ հուշարձաններում հայտնաբերված հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ այդ նշանակությունն ավելի լայն ընդգրկում ունի և ամփոփում է ոչ միայն նախաուրարտական, այլև ետուրարտական՝ հայկական ժամանակաշրջանը։

Էրեբունիում հայտնաբերված վաղհայկական (աքեմենյան) շերտը, վաղհայկական և հելլենիստական դամբարանադաշտերը Կարմիր բլուրում, նույն ժամանակաշրջանի նյութերը Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձաններում՝ Վանում, Ալթըն-թեփեում, Բաղնոցում և այլն, թույլ են տալիս քննել նաև բուն հայկական ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող մի շարք կարևոր հարցեր։

Այդ նույնը պետք է ասել Արգիշտիխինիլիի մասին։ Դա է, թերևս, պատճառը, որ գրախոսվող աշխատության մեջ պատշաճ ուշադրություն է դարձվել ետուրարտական նյութերին։

Այդ նյութերը բաժանվում են մի շարք խմբերի։ Առաջին խմբին են վերաբերում հուշարձանի տարածքում, մինչև պեղումների սկսվելը պատահականորեն գտնված նյութերը։ Երկրորդ

խումբը ամփոփում է ուրարտական քաղաքի թաղամասերում և բնակարաններում պեղված ետուրարտական ժամանակաշրջանի դամբարանները՝ նրանց նյութերով հանդերձ։ Քաղաքի արևելյան ծայրամասում կատարված հետախուզական պեղումների արդյունքները կազմում են երրորդ խմբի բովանդակությունը։ Վերջապես, առանձին խմբի մեջ կարող են դասվել այն նյութերը, որոնք ուրարտական լինելով հանդերձ, ետուրարտական մշակույթի որոշակի երևույթների հիմքում են կանգնած։

Աշխատության մեջ վերոհիշյալ նյութերը ուսումնասիրված են հանգամանորեն, ցույց են տրված նրանց մշակութային աղերսները, պարզաբանված են նրանց ծագումնաբանական հարցերը։

Աշխատությունը զուրկ չէ նաև որոշ թերություններից։ Թեպետ Արգիշտիխինիլիում վաղ՝ մ. թ. ա. VIII դ. խեցեղենը տարբերակված է ուշ՝ մ. թ. ա. VII—VI դդ. խեցեղենից, սակայն միշտ չէ, որ այն պատշաճ տեղ է գտել աշխատության իլյուստրատիվ նյութերում (էջ 82-ում հիշատակված խեցեղենը, ՀՊՊ թանգարանի ֆոնդերում պահվող ամբողջական կամ ամբողջացող նմուշները)։

Չի կարելի համաձայնվել հեղինակի այն ենթադրության հետ, որ Արգիշտիխինիլիում մասնավոր տնտեսությունների հողամասերի ընդհանուր տարածությունը գերազանցում էր պետական հողերին (էջ 142)։

Չի հաստատվում այն կարծիքը, ըստ որի Ռուսա I-ի անհաջողությունների հետևանքով Սևանի ավազանի բնակչությունը լքել է իր բնակավայրերը ու հաստատվել Արարատյան դաշտի ուրարտական քաղաքներում (էջ 32—33, 90, 100, 135)։ Իրանական Ադրբեջանում դեռ վաղուց, իսկ Զանգեզուրում վերջերս գտնված Ռուսա I-ի հաջորդ Արգիշտի II-ի արձանագրությունները ցույց են տալիս, որ Սարգոն II-ի՝ դեպի Ուրարտու կատարված արշավանքների կործանարար համարվող հետևանքները ենթակա են վերանայման։ Հեղինակը գտնում է, որ Արմավիր քաղաքը տարածվել է Արմավիր բլուրից դեպի հյուսիս՝ հասնելով մինչև այժմյան Բամբակաշատ գյուղը, ունենալով այդպիսով հյուսիս-հարավ առանցք (էջ 55, նկ. 10)։ Մեր կարծիքով շատ ավելի վստահելի են թվում այն տվյալները (այդ թվում և Նոր Արմավիրի արշավախմբի աշխատանքների տվյալները), որոնք խոսում են Արմավիր քաղաքի դեպի արևմուտք տարածվելու մասին։ Աշխատության մեջ հրատարակված Արգիշտիխինիլիի ետուրարտական համարվող նյութի եթե ոչ ամբողջ, ապա գերակշռող մասը պատկանում է ոչ թե վաղհայկական (աքեմենյան) ժամանակաշրջանին, ինչպես կարծում է հեղինակը, այլ հելլենիստական ժամանակաշրջանին։ Այդ մասին է վկայում այդ նյութի, ավելի ճիշտ խեցեղենի ակնհայտ կապը, իսկ հաճախ նույնությունը, Արմավիրի այժմ հաստատապես հելլենիստական ժամանակաշրջանով թվագրվող շերտում գտնվող իրերի հետ։ Մինչև սիստեմատիկ պեղումների սկսվելը Արգիշտիխինիլիի տարածքում պատահականորեն գտնված ետուրարտական նյութերի մեծ մասը ծագում է ոչ թե արևմտյան ամրոցի (Դավթի բլուր) շրջապատից, ինչպես կարծում է հեղինակը (էջ 9, 55), այլ Արմավիրից։ Յանկալի ժլիներ ցույց տալ ուրարտական քաղաքի փլատակներում նրա արդեն ավերված բնակարաններում հայտնաբերված ետուրարտական ժամանակաշրջանի դամբարանների տեղագրումը (այսպես կոչված սիտուացիոն պլանը), որն ընթերցողին մի հայացքից հասկանալի կդարձներ քաղաքի անկման պատկերը։ № 7 քարտեզի վրա որոշ անճշտություններ կան։ Հայկավան (Թափա դիրի) և Արմավիր (Ղուրդուղուլի) գյուղերի տեղերը շփոթված են։

Գրախոսվող աշխատության մեջ ներկայացված նյութերը թույլ են տալիս արդեն հիմա որոշակի պատկերացում կազմելու ուրարտական քաղաքի մասին։ Այս հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծում է Արգիշտիխինիլիում կատարված աշխատանքների նշանակությունը, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում պեղվող ուրարտական տասնյակ հուշարձանների թվում բացակայում են ուրարտական քաղաքները, բացառությամբ Թելշեբաինիի (Կարմիր բլուրի), որի ուսումնասիրումը, ևս ի դեպ, կատարել է Հ. Մարտիրոսյանը։ Հաջորդ, 1970 թ. առ այսօր տեղ աշխատանքների արդյունքներին նվիրված Հ. Մարտիրոսյանի հատորը, ինչպես նաև արշավախմբի ճարտարապետ Կ. Ղաֆադարյանի քաղաքի ճարտարապետության ուսումնասիրության արդյունքները ամփոփող հատորը, որոնց հրատարակմանը մասնագետները սպասում են անհամբերությամբ, էլ ավելի կամրողջացնեն մեր գիտելիքները ուրարտական այդ նշանակալից քաղաքի մասին, նոր հեռանկարներ բացելով հին արևելյան քաղաքաշինության ու քաղաքային կյանքի ուսումնասիրության ասպարեզում։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու